# ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ԶԻՆՎՈՐԻ ԵՐԳԵՐ

## 1 (343)

Կռիվը ծաքեցավ Թովուզ կեարմը,
Ոսկանի Մեերարի կորած եեաըմը,
Գեցցե՛ք, շամշաղնեցիք, քաջ-քաջ կռվեցիք,
Այլոց հաղթեցիք, սաղ-սաղ բռնեցիք,
Գետնում եռըեցիք, ապրե՛ք, քաջ հայեր:

Դուշմանը մեզ սվսվ ջան ֆիդա անում,
Այդ անվան համաձայն, տեսավ զորություն,
Գեցցե՛ք, շամշաղնեցիք, քաջ-քաջ կռվեցիք,
Այլոց հաղթեցիք, սաղ-սաղ բռնեցիք,
Գետնում հորեցիք, ապրե՛ք, քաջ հայեր:

Կռիվը անց կացավ Թաքըլվի հողը,
Թուրքերին տվել ին սարսափն ու աՙողը,
Գեցցե՛ք, շամշաղնեցիք, քաջ-քաջ կռվեցիք,
Այլոց հաղթեցիք, սաղ-սաղ բռնեցիք,
Գետնում հորեցիք, ապրե՛ք, քաջ հայեր:

Դուշմանը մեզ տվսվ ջան ֆիդա անում,
Այդ անվան համաձայն, տեսավ զորություն,
Վառվել էր խոտը, տանում էր հոտը, } 2
Թուրք չկար մոտը, ապրե՛ք, քաջ հայեր: } 2

Այս երգը կապեց Արշակ Լազրովը, } 2
Գեցցե՛ք, շամշաղնեցիք, քաջ-քաջ կռվեցիք,
Այլոց հաղթեցիք, սաղ-սաղ բռնեցիք,
Գետնում հորեցիք, ապրե՛ք, քաջ հայեր:

## 2 (344). ՍԵՎ-ՔԱՐԵՑԻ ՍԱՔՈՅԻ ԿՆԳԱ ԵՐԳԸ

Այն օրը որ քեզ տեսա, } 2
Էլ ուրիշին չսիրեցա: } 2
Սեքարիտ ղուրբան, Սաքո ջան, վա՜յ, } 2
Սաքո ջան, վա՜յ, Սաքո ջան: } 2

Քո պատճառով շատ սիրեցի, } 2
Որտեղ տեսա սեքարեցի: } 2
Սեքարիտ ղուրբան, Սաքո ջան, վա՜յ, } 2
Սաքո ջան, վա՜յ, Սաքո ջան: } 2
Ընկերիտ ղուրբան, Սաքո ջան, վա՜յ, } 2
Սաքո ջան, վա՜յ, Սաքո ջան: } 2

## 3 (345). ՀԱՍԱՆ-ՂԱԼԱ

Վերան մնա Հասան-ղալեն,
Անդեր մնա Հասան-ղալեն,
Հասան-ղալա, բաշ ու բալա,
Հասան-ղալա, բաշ ու բալա:

Հասան-ղալի բերքը զային,
Պալկովնիկն էր մեզի խային,
Զարքիլ տվաց ամբողջ եային,
Պատմիր, նամակ, վիրավոր եմ:

Հասան-ղալեն բարձր սար է,
Չորս բոլորը դուման քար է,
Վերան մնա Հասան-ղալեն,
Անտեր մնա Հասան-ղալեն,
Հասան-ղալա, բաշ ու բալա:

Հասան-ղալի տեղը դուշ էր,
Գյուլլեն կարկուտի պես խշշեր,
Բալեա մեռնի Էմիր փաշա,
Պատմիր, նամակ, վիրավոր եմ:

## 4 (346). ԿԵՐՉԻ ԵՐԳԸ

Կրասնադարի սարի լալեն,
Մեռնի զիրմանացու բալեն,
Մայրս մնաց միկրասալեն,
Պատմիր, նամակ, վիրավոր եմ:

Հենց որ անցա Կերչի հողը,
Սարմինս բռզավ մահվան տողը,
Անպատված էր ինձ խփողը,
Պատմիր, նամակ, վիրավոր եմ:

Տիրքըմը նսաած ժամանակս,
Ես կյըրում եմ այս նամակս,
Թող կյան տանեն իմ դիակս,
Պատմիր, նամակ, վիրավոր եմ:

Առավոտյան լուսաբացին,
Քյորփա բալես՝ օրօրոցին,
Սիրած յարս՝ ծեռը ծոցին,
Խավկեք մորս, վիրավոր եմ:

# ԵՐԳԵՐ

## 5 (347). 1927թ. ԳՅՈՒՄՐՎԱ ԺԱԺՔԸ

Ժամը յոթին ժաժքը եղավ,
Գյումրին ավիրվեց, } 2
Աղաներին բոշի սաղը
Ներս հրավիրեց: } 2
Ժաժքը եղավ, աշխար բըլեց,
Մնաց մեր բակը, } 2
Սասլնոտ-սասլնոտ դուրս էին գալիս
Բաղնիք-սանիցը, } 2
Նայի՛ք, նայի՛ք, մեյն էր ընկնում
պատուհանիցը:
Ժաժքը եղավ, աշխար բըլեց,
Մնաց մեր բակը,
Հարուստ մարթիք պոյեզ նստան,
Փախչում ին Թիֆլիզ,
Քյասիբները փողոցներում
Մնն էին գալիս:

## 6 (348). ՍԱՐԻՐԻ ԾՈՐԵՐ

Սարիրի ծորեր՝ քե մատաղ,
Պաքվա ծովեր՝ քե մատաղ,
Դե արի՛, արի՛, ա՛ Սարքիս,
Չուշտերս կայի, ա՛ Սարքիս:

Սեր եմ քաշել թթվել ա,
Ջահիլ օրս մթնել ա,
Դե արի՛, արի՛, Սարքիս ջան,
Գալտ ա պա՛րի՛, էհե՜յ ջան:

Դե արի՛, արի՛, ա՛ Սարքիս,
Ծին յեարի, ա՛ Սարքիս,
Նստի արի՛, ա՛ Սարքիս,
Կալտ ա պա՛րի, ա՛ Սարքիս:

Սարիս ճամփեն քարոտ ա,
Յարը յարին կարոտ ա,
Դե արի՛, արի՛, Սարքիս ջան,
Դե արի՛, արի՛, էհե՜յ ջան:

Սարիրի ծորեր՝ քե մատաղ,
Բաքվյա ծովեր՝ քե մատաղ,
Կարմիր կովեր՝ քե մատաղ,
Դե արի՛, արի՛, Սարքիս ջան,
Դե արի՛, արի՛, էհե՜յ ջան:

Լիքը ջանս՝ քե մատաղ
Ծիմշատ բոյս՝ քե մատաղ,
Դե արի՛, արի՛, Սարքիս ջան,
Չուշտերս կարի, էհե՜յ ջան:

Դե արի՛, արի՛, ա՛ Սարքիս,
Չուստերս կարի, ա՛ Սարքիս,
Գալտ ա պարի, ա՛ Սարքիս:

Երգան ծամս՝ քե մատաղ,
Ծիմշատ բոյս՝ քե մատաղ,
Դե արի՛, արի՛, Սարքիս ջան,
Դե արի՛, արի՛, էհե՜յ ջան:

Չուշափս ապկը մաշել ա,
Չուշափս ապկը մաշել ա,
Յարըս ճամփեն յաշել ա,
Դե արի՛, արի՛, ա՛ Սարքիս,
Գալտ ա պա՛րի, ա՛ Սարքիս:

Նավուրի նովեր՝ քե մատաղ,
Կարմիր կովեր՝ քե մատաղ,
Դե արի՛, արի՛, Սարքիս ջան,
Չուսաերս կարի, Սարքիս ջան:

Դե արի՛, արի՛, ա՛ Սարքիս,
Ծին յեարի նստի արի՛, ա՛ Սարքիս,
Դե արի՛, արի՛, ա՛ Սարքիս,
Գալտ ա պա՛րի, ա՛ Սարքիս:

## 7 (349)

Չարքմա-կալոշ վըեափտ մատաղ,
Ա՛քյնա, քյնա հետիտ մատաղ,
Չա՛քմա-կալուշ վըեափա մատաղ, } 2
Ծին յեարա ջանիտ մատաղ,
Ջանըը կոխած սանիտ մատաղ,
Ա՛քյնա, քյնա հիտիտ մատաղ,
Չա՛քմա-կալուշ վըեափա մատաղ:

Որ կյալիս ես, ըրեքնակ ես, } 2
Տուն ես մտնըմ՝ ճրագի լույս ես,
Դուն ինձ համար կյանք ու հույս ես: } 2
Քոլը մտնես՝ առն եղնիկ ես,
Սարի դոշին ըրեքնակ ես:
Ա՛քյնա, քյնա հետիա մատաղ,
Չա՛քմա-կալոշ վըեափտ մատաղ: } 2
Ախ եմ կանչել ըրեքնակը կյտ,
Քամին կյա տա, քյուլըտ շաղ տա:
Ա՛քյնա, քյնա հետիտ մատաղ,
Չաքմա-կալուշ վըեափտ մատաղ: } 2